

ՔՍԱՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմիային խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տ է լ է Ք օ Ն 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իրաքանչիւր բառին 2 կոպեկ.
Տ է լ է Ք օ Ն 253.

ՀԱՄԱՐԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՀԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱՃԱՆՈՐՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՆԵՐԿԱՅ 1898 ԹԻՒ

ՄՇԱԿ ԴՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԿՐԻ

«Մշակ» տարեկան գինը թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 ռուբլի է, տասն
և մէկ և տասն ամսականը՝ 9 ռ., ինն և ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝
6 ռ., հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ., մի
ամսականը՝ 1 ռուբլի:

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը (Բաղրամյան և Բարոնիկյան փողոցն. անկիւն):
Ուրիշ քաղաքներից պէտք է գիտել այս հասցեն. ТИФЛИСЪ, редакция „Мшакъ“, իսկ
արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien „Mschak“.

Յայտարարութիւններ ընդունվում են թէ հայերէն, թէ ռուսերէն և թէ օտար լեզուներով:

ԲՈՎԱՆՎԱԿՈՒԹԻՒՆ

Տրամադրութիւնը նպատակւոր է.— Ներքին
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Թիֆլիսի ձիաբաշի առիթով. Նա-
մակ Իգորից. Նամակ Խմբագրութեան. Ներքին
լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գիտութեան
մի նոր յաղթանակը. Գրէյֆուսի գործը. Արեւելի
գրութիւնը. Նամակ Պարսկաստանից. Արտաքին
լուրեր.— ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.— ՀՅՈՒՆԱՐԻՆԵՐ.—
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նա-
մակ Թիւրքիայից:

ՏՐԱՄԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՊԱՏԱՏԱՐՈՒՆ

Ընդհանուր խաղաղութեան վեհ առա-
ջարկը չը նայած քաղաքական մի քանի
խորհրդներին, որոնք բոլորովն են շատ բար-
ձր անձնաւորութիւններից, — ընդհանուր-
պէս շատ նպատակւոր պայմանների մէջ
հանդէս եկաւ: Ամբողջ Եւրոպան, կամ ա-
ւելի լաւ է ասել՝ քաղաքակրթ աշխարհի
ամբողջ հասարակաց կարծիքն սպասում
էր խաղաղութեան հրաւերին այնպէս,
ինչպէս խաղաղութեան երկնային մասնա-
նային՝ իրանց անսպասելի ճանապարհ-
հարկութեան ժամանակ...

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԹԻՐԻՔԻՍՏԻՑ

Կ. Պօլիս, օգոստոսի 24-ին

Վիլհելմ կայսեր ու կայսրուհին ի Պաղես-
տին ուղևորութիւնն՝ երթալով կարևորութիւն
կը ստանայ Եւրոպական պետութեանց առջև:
Դերմանական լրագրները կաշխատեն կայսե-
րական սոյն ուղևորութեան մեծ կարևորու-
թիւն տալ թէ կրօնական և թէ քաղաքա-
կան տեսակէտով: Եւ իրօք, եթէ հաւատ ըն-
ծալիկ հարկ է այդ լրագրներու հրատարակու-
թեանց, Վիլհելմ II կայսեր ու կայսրուհին
սոյն ուղևորութիւնը՝ փորձ մ'է տարածելու բո-
ղոքականութիւնն Արեւելի մէջ, ի վեր հանելով
Նախ՝ անոր ազդեցութիւնն Եւրոպայէն, բան
մը՝ որ մինչև այս օրս կը պակսի գերմանական
կայսրութեան համար, քրիստոնէութեան օրբան
ճանչցված այդ երկրին մէջ, և, անտարակոյս,
այս պատճառաւ է, որ գերման վեհապետն՝ ոչ
թէ միայն իր պետութեան մէջ գտնվող զանա-
զան եկեղեցիներու պաշտօնական ներկայացու-
ցիչներն իր հետ առած կը տանի Եւրոպայէն,
այլ և հրաւիրած է Գանիմադայի, Շելլի, Նորվեգիայի
և Հոլանդայի Լիտերական և Բա-
րեկարգեան (Reformistes) կոչված եկեղեցիներ-
ու կողմանէ ալ յատուկ զէնչատներն՝ որ իրեն
ընկերանան:

Վիլհելմ II-ի ուղևորութիւնն անշուշտ վեր-
պած չէ երբեք ուսական եկեղեցւոյն յարաճուն
գերակշռութիւնն Եւրոպայէն մէջ, հետեալաբար
ինքն, իբրև վեհապետ նաև գերման կաթոլիկ-
ներու, կաթոլիկ եկեղեցւոյն իրաւասութիւններն
ալ պաշտօնակալ ձեռնհասութիւնը կը ջանայ
ցոյց տալ, և, այս պատճառաւ է՝ որ պաշտօնա-

րին է տեսնում խաղաղութիւնը, բայց այլ
ևս հերքել չէ կարելի, որ ոչ ոք չէ ուզում,
աւելի կասեցնել ոչ ոք չէ համարձակվում
պատեանից հանել վտուռ գէնքը և թըշ-
նամու դէմ դուրս գալ: Եւրոպան հէնց
վերջին տարիները պատերազմի շատ ա-
ռիթներ ունեցաւ: Հայոց հարցը, յունաց
անաջող պատերազմը, Արեւելի քրիստո-
նեաների կոտորածը, մակեդոնական դէպ-
քերը, վերջապէս Ֆիլիպպեան կղզիների
խնդիրը և չինա-եւասպոնական կարեւոր դէպ-
քերը մի-մի գործը առիթներ էին պատե-
րազմ սկսելու և լուծելու քաղաքական
կնճռոտ խնդիրները, բայց ոչ ոք անաջին
քայլը չարեց, ոչ մի պետութիւն չը փտա-
հացաւ առաջին նշանը տալ: Պատճառը
շատ պարզ է: Եւրոպական նոր պատերազ-
մը առաջ կը բերի սոսկալի կոտորածներ,
նա կը խլի մարդկային անթիւ ու անհամար
կեանքեր, նա արին կը տարածի ամեն
կողմ: Մինչդեռ բոլոր ազգերը, համարեա
առանց բացառութեան, դէմ են պատե-
րազմին, զգում են արեան գետերից և
գիւղիների կոյտերից, որոնցով շատ անգամ
պարծեցել է Եւրոպան մինչև Նապոլեոնի
արշաւանքները, մինչև Բիսմարկի ստեղծած
մեծ կռիւր...

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍԻ ՁԻԱՔԱՇԻ ԱՌԻԹՈՎ

Գուցէ շատերն զարմանն, որ Թիֆլիսի ձիա-
քաշ երկաթ ուղու հարցի նման մի հարց
դուռայի մէջ գրաւել է առաջնակարգ տեղ և
ձիաքաշին նուիրված նիւտերն ստացել են ա-
ռանձին հետաքրքրութիւն: Սակայն բաւական է
փոքր ինչ ծանօթ լինել գործի հետ, որպէս զի
բոլորովն հասկանալի դառնայ հետաքրքրութեան
էութիւնը: Ձիաքաշի հարցը փորձաքաշ է՝ ո-
րոշելու քաղաքային դուռայի ներկայ կազմու-
թեան մէջ տիրող խմբերի դիրքը դէպի քաղաքի
բարեկարգութիւնը:

Անս այն գլխաւոր կէտերը, որ զեկալարող
գեր են կատարում այն անձանց համար, որոնք
պաշտպան են ձիաքաշի նման մի մեծ ձեռնար-
կութիւն քաղաքային ինքնավարութեան ձեռքին
պահելու: Նախ՝ պարտաւորեցուցիլ պէտք է հա-
մարել ձգտել քաղաքի բարեկարգութեան վերա-
բերեալ ձեռնարկութիւնները կենտրոնացնել քա-
ղաքային վարչութեան և նրա օրգաններին մէջ,
որպէս զի քաղաքը կարողանայ առաջ տանել
գործը մի կողմից անտես ապէս և ինչայ ո-
ղաբար, երբ այդ կարելի է, իսկ միւս կողմից
ընդարձակել և զարգացնել նրան, երբ
այդ անհրաժեշտ է: Այն շահը, որ պէտք է ստա-
նար մասնաւոր անձը կամ մի առանձին բնկե-
րութիւն, կը մնայ քաղաքային դրամարկում և
կը ծառայի քաղաքի միւս կարիքները լրացնե-
լուն: Այն բարեփոխութիւնները, որ մասնաւոր
անձը չէր ցանկանայ մտցնել, կարելի կը դառ-
նան, երբ գործի գլխին կանգնած կը լինի ինքը
քաղաքային ինքնավարութիւնը: Պակաս նշանա-
կութիւն չունի և մի ուրիշ նախադրանք, այն է՝
կօստրօլի և բարեկարգութեան հարցը: Քաղաքը,
ինչպէս փորձերը ցոյց տուին, թէ և
կարող է նշանակել խիստ կօտորոյ այս և այն

Ահա՛ դէպի պատերազմը տածվող այդ
խորը առեւտրութեան և երկրւոյ մէջ է, որ
խաղաղութեան նոր հրաւերը պիտի
գտնի մի գործը պատուանդան իր համար:
Այդ առեւտրութիւնը և երկրւոյ այժմ ար-
տադրութիւնը է հասարակաց կարծիքի մի-
ջոցով, բայց հեռու չէ այն ապագան,
երբ նա արձագանք կը գտնի և թաղաւոր-
ների ու զօրապետների արտի մէջ: Ռուսաս-
տանը համարվում էր մինչև այժմ ամե-
նապատերազմաւոր երկրներից մէկը, իսկ
ուսաց կայսրները՝ դէնքի հովանաւորներ:
Եւ եթէ այսօր խաղաղութեան ձայնը հնչե-
լով է Ռուսաստանից, ինչու չը պիտի
հաւատանք, որ այդ ձայնը արձագանք կը

բեր, իբրև հողորդ-պետ պրոտական բողոքա-
կան եկեղեցւոյն. սակայն պարկեւան թերթ մը՝
«La Fronde», այս առթիւ դիտել կուտայ՝ թէ
Աւստրիոյ կայսրն՝ Ֆրանս-Փօլէֆ, իբրև իր
ցեղական սեփական մէկ իրաւունք, և իբրև իր
անձին յատուկ պատուաւոր տիրույթ մը միշտ
իր վրայ կը պահէ ժողովար Եւրոպայէն ա-
նուն, և հիմա Վիլհելմ II, որ պարզ հաճութիւն
համար, և կամ, ուխտաւորութեան պատուա-
կաւ, Եւրոպայէն կը երթն, և սակայն իր հետ
կը տանի տասնամեկ եպիսկոպոս, երկու զօրա-
վար, տասնմեկ սպայ և ուրիշ բազմաթիւ ե-
կեղեցականներ, գրագէտներ, լրագրողներ, բը-
միշկներ, վաճառականներ, սեղանաւորներ և
այլն, և այլն, ոչ ապաքին իրական կատակա-
նոր Ֆրանս-Փօլէֆի, թէ մի գուցէ իր ե-
րիտասարդ, կրակոլոք և կայսերական աստի-
ճանակիցն՝ հիւսիսային բողոքական կայսրը՝
Վիլհելմ, յաջողի պակսեցնել, Պաղեստինի մէջ,
կաթոլիկ ազդեցութիւնն... և անս այս կատակա-
նորն առջին առեւտրական համար է՝ որ Բերլինի
բոլոր լրագրները մասնաւոր շնորհով կը յայ-
տարարեն՝ թէ Վիլհելմ II Եւրոպայէն կը երթն
միմիային իբրև պաշտպան Արեւելի մէջ բողոքա-
կան եկեղեցւոյն և ոչ՝ Քրիստոսի գերեզմանին:

«Reichswehy» գերմանական թերթն, ի մէջ
այլոյ, պարզապէս հրատարակած է՝ թէ Վիլ-
հելմ կայսրն միակ նպատակն է եղի բարձրա-
ցնել ազդեցութիւնը բողոքական եկեղեցւոյն, ո-
րուն կը պատկանի և իր կայսերական անձն, և
թէ՛ նա երբեք ոչ ոք չէ դեր մը չունի եղի կա-
տարելու, ինչ որ Աւստրիոյ կայսրը կը ստարե-
նադէմական խնդիրներու մէջ՝ իբրև ժողովար
Եւրոպայէն, կամ, իբրև Գանիմադ-պաշտպան:
միայն թէ—կը յարէ նոյն թերթը—Վիլհելմ
կայսրը պիտի պաշտպանէ գերման կաթոլիկե-
րու շահերը՝ միմիային վաճառականական տեսա-
կէտով:

Մինչդեռ եւրոպական պետութիւնները կը
տաքնապէս դանդաղան խորհուրդներով Վիլհելմ
II-ի սոյն մասնաւոր ուղեգնացութեան վրայ,
աստիճանաբար մեծ խալիֆան տարօրինակ
եռանդ մը ցոյց կուտայ՝ նմանը չի տեսնուած
ընդունելութիւն մը ընելու իր վեհապետ հիւ-
րին և անձնուրեք բարեկամին, ու թէ և եւրոպա-
կան լրագրները շատ կը չափազանցեն իրենց
նկարագրութեանց մէջ թէ ի Կ. Պօլիս և թէ
Եւրոպայէն կատարված շնորհիւնաց մասին,
սակայն այսու ամենայնիւ դարձեալ Թիւրքիոյ
մէջ մինչև ցայսօր տեսնված չեն այն մեծ պատ-
րաստութիւնները, որ կը լինին ի պատիւ գեր-
մանական կայսրի: Մայրաքաղաքին փողոցներն
արտակարգ ոգևորութիւն մը ցոյց կուտան.
գրեթէ բոլոր մեծ պողոտաներն ու փողոցները
կը վերանորոգուին՝ ուր կաշխատեն բանաւորե-
րու անհամար խումբեր. իսկ այն փողոցներուն
շուրջը գտնված բոլոր տուններն ու շէնքերը՝ ո-
րոց առջինն պիտի անցնի կայսերական թա-
փօրը, կրածեփով անարատ սպիտակութիւն մը
զգեցած են: Այն փողոցներն՝ ուսկից օգոստոս-
փառ հիւրն անցնելու դժբախտութիւնը չը պի-
տի ունենայ, կը մնան մի և նոյն աղտոտ և ա-
պականեալ վիճակի մէջ: Ձինուորական կարգա-
պահութեան և ձեռքու մանուշակ մեծ հոգս ու
խնամք կը տարուին ի հաճոյս ևեթ Դերմանիոյ
կայսրի: Դերման սպաներ և զինուորականներ,
որ օսմանեան բանակին կը ծառայեն, գիտ-
նալով, որ երիտասարդ և հաճոյաւոր կայս-
րը չափազանց ուրախ կը լինի զօրահան-
դէմներ տեսնելով, զինուորական մարզանքի
ժամերը կրկնապատկած են և օրը մէկ քա-
նի անգամ անցանալէններ կրնն: Բայց
օսմանեան նաւատորմը շատ ողորմելի վի-
ճակի մէջ է, այնպէս որ հաւրկ Ոսկեղջիւրի
աղմուտ շուրջերուն վրայ կրնայ շարժիլ. սակայն
մեծ ջանքեր կը լինեն, որպէս զի գտնի կարենայ
երթալ ցայն վայր, ուր սովորած պիտի դիմաւո-

ձեռնարկութեան վրա, բայց նա անկարող է ա-
րագ և անպայաջ կերպով կռիւլ գանդառութիւն-
ները և զեղծումները դէմ, բարեկարգել մի տղն-
տեսութիւն, որ վատ է առաջ տարվում և այլն:
Պէտք է չեղել և մի երրորդ կարևոր հանգա-
մանը, այդ այն է, որ քաղաքները ինքնուրոյն
գործունէութիւնը նպաստում են տեղական ար-
դիւնագործութեան, ձեռնարկութիւնները չեն
ընկնում օտար կապիտալիստներին ձեռքը, այլ
մնում են քաղաքի մէջ: Առաւելաբար շատ
համակրում է այդ տեսակ գործունէութեան և
իր կողմէջ նպաստում է քաղաքներին, հնչու-
թեամբ թող տալով իրաւորով իրանց ձեռնար-
կութիւնները և բաց է անում հարկաւոր կրե-
ւորներ: Շնորհիւ քաղաքային և գեմատիօ ինքնա-
վարութիւնները գործունէութեան՝ ներկայումս
Ռուսաստանի մէջ գոյութիւն են ստացել տեղա-
կան շատ խնդր ձեռնարկութիւններ, որոնք
տանհետ միջոցներ են կրնան և որոնց բերած
արդիւնքը մնում է հասարակական հիմնարկու-
թիւնների ձեռքին: Վերջապէս չը պէտք է մո-
ռանալ և այն, որ ժամանակը ձեռնարկութիւն-
ները խոյ տալով, քաղաքային ինքնավարու-
թիւնն ապահովում է իրան մասնաւոր ազ-
գեցութիւնները, որոնք վնասել են շատ անգամ
քաղաքներին և ինքնավար կապիտալիստ տեսակ
պայմաններ զանազան կապիտալիստներին հետ,
որոնք ամեն կողմից աննպաստ են եղել քաղաք-
ներին համար և որոնցից ազատ չէ նոյն իսկ
Թիֆլիսի քաղաքային ինքնավարութիւնն իր ան-
ցեղ գործունէութեան մէջ:

Ուրեմն բաւական մեծ են այն առաւելութիւն-
ները, որ ունեն քաղաքները, կազմակերպելով
ինքնուրոյն կերպով այն ձեռնարկութիւնները,
որոնք մինչև այժմ մեծ մասամբ տրվում էին մաս-
նաւոր անձանց և ընկերութիւններին: Այդ տե-
սակէտից՝ շատ ուրախակալ է, որ Թիֆլիսի քա-
ղաքային դոմային մէջ ոյժ է ստացել այն խում-
բը, որ ձգտում է՝ որպէս զի քաղաքը տէր դառ-
նայ իր ձեռնարկութիւններին:

ՆԱՄԱԿ ԻԿԻՐԻՑ

Օգոստոսի 25-ին

Ընթերցողն անշուշտ յիշում է, թէ մի պիտի
ուրախութիւն յայտնեցինք անցեալ տարի մեր
նամակներից մէկի մէջ, որ Մալոյի հասարա-
կութիւնը պատրաստում է պարգևատրել ոսկե
չղթայով հասարակութեան տանուէր՝ Խամայիլ-
բէկ Սուլթանովին, նրա արդար դատարարու-
թեան, անկաշառակերութեան և զանազան բա-
րեմանութիւնների համար: Փիւղական վարչա-
կան պաշտօնեաների մէջ տեսնել այսպիսի բա-
րեմանութիւններով օժտված մարդիկ, իսկ որ
հիմաւնը կարող է պատճառել բոլոր այն ան-

ըէ իր ամենասիրելի և պատուական հիւրը:

Նրուսաղէմ ալ մեծ շարժման մէջ է, տակա-
ւին կը շարունակեն խնդիրներու շինութիւն-
ները, ու թէպէտ, ինչպէս կը լսեմք, ուրիշ մե-
ծամեծ շէնքեր ու նորոգութիւններ պիտի լի-
նին, սակայն չեմք գիտեր: Երբ պիտի սկսեն ու
Երբ պիտի աւարտեն, որովհետև հազար մէկ ու
կէս ամիս մնացած է և Գաւթի քաղաքը պիտի
ընդունի իր օգոստոսական այցելու-ուխտաւորն...
Բայց ինչ որ ալ լինի, վերջապէս սուլթանը
կաշխատի իր մեծ-բարեկամին ցոյց տալու իր
առատաբարութեան նկատաւը, և, հակառակ
իր բնական սովորի ժպտութեան, զբաղակա-
մեծ զոհողութիւններով պիտի զբաւէ անոր սիր-
տը բովանդակապէս, և սակայն, իր կարծիքով,
սոյն միջոցաւոր փողերը պարագայ տեղ չեն
վատնուիր: Նա մեծ յոյս ունի, որ ապագային՝
չափով ու տոկոսով ձանդերձ, կրկին ու երեք-
կինը պիտի դանձնէ՝ սա համոզմամբ, թէ այս
երկու պետութեանց միջև բարեկամական յարա-
բերութիւններն սրբան ամրապնդին, այնքան
վաճառականական յարաբերութիւններն առաջ
պիտի երթան: Այստեղ հաստատուող գերման-
ները, իրենց իրեն երկրորդ հարկերը կը ծան-
չեն Թուրքիան, և այս պատճառաւ հիմա մայ-
րաքաղիս և ուրիշ գերմանաբնակ թրքական դա-
ւառներու մէջ մեծ կարեւորութիւն ստացած է
գերմանական լեզուի սլակութիւնը: Սուլթա-
նը, Գերմանիոյ դեսպանին օժանդակութեամբ,
1897-ին, Պէպէրի մէջ զարոյց մը հաստատեց՝
մասնաւորապէս գերմաներէն ուսուցանելու հա-
մար: Հիմա ալ աղկանց վարձարան մը պիտի
բացուի թոշակաւորներու համար: Այս երկու
զարոյցներուն մէջ պիտի աւանդուին, բացի լե-
զուագիտութենէ, մաթեմատիկայէ և վաճա-
ռականական գիտութեանց ամեն ճիւղերը, և
նոր սերունդը հին պիտի պատրաստուի մտնել
վաճառականութեան և ձեռարուեստութեան ա-
պարէզին մէջ:

Մեր ստացած ստորագրեցութեանց վրայ

ձանց, որոնք լաւ ծանօթ են և գիտեն, թէ ստո-
րին պաշտօնեան ինչ գին ունի գիւղական հա-
սարակութեան համար: Մեր նամակը երևաւոյ
յետոյ եղան նկատողներ, որ Խամայիլ-բէկը ար-
ժանի չէր այդ պատուին և գովասանքին, որ նա
հասարակութեան համար աւելի վնասակար է,
քան օգտակար, որ նա մի վարագործված սա-
տանայ է: Մենք այդ բոլորը վերագրում էինք
չկամութեան և անձնական ինքնութեան: Ան-
ցաւ մի կարծ ժամանակ և մենք հիասթափվելով
սովորեցինք համոզվել հասարակութեան և մեր
սխալի մէջ, և խոստովանում ենք, Խամայիլ-բէկը
գիւղական հասարակութեան համար իսկապէս
մի վնասակար անձն է: Ճշմարտութեան դէմ
մեղադրած չը լինելու և մեր ասածները ապա-
ցուցանելու համար աւելորդ չենք համարում ար-
ձանագրել փաստեր:—Մենք համոզված էինք,
որ Խամայիլ-բէկը շատ մաքուր է զբաղական հար-
ցերի մէջ, բայց բանից դուրս եկաւ, որ նա ըն-
դունէ և հասարակութիւնից ոչ թէ միայն մա-
թիկներ, այլ կոպէկներ իսկ կ'ըլլելու, որի համար
դատի է ենթարկվել: Ոստիկանութեան և դա-
տադրական զինուորի կատարած ընդնութիւննե-
րով ապացուցվել է հասարակապետական փողերի
սեփականացնելը: Հասարակական փողեր սեփա-
կանացնելու գործը՝ ընդնութիւնից յետոյ անցել
է պրօկուրօրին, իսկ թէ նախանշեցական դատա-
բանում ինչպէս կը վերջանայ, այդ ապագայի
գործ է: Երկրորդ փաստ: Ընթերցողը գուցէ յի-
շում է Մալիկի մէջ հրատարակած այն լուրը,
որը վերաբերում էր Ալիքանաբուրու գիւղում տե-
ղի ունեցած մի ամբողջ ընտանիքի՝ հօր, մօր և
որդու սպանման: Ոճրագործութիւնը կատարվեց
աշկարա, ամբողջ գիւղը աշկերծվեց, գիւղացիներ-
ից ամեն մէկը ոճրագործին հանդիպելու աշ-
խատում էր դեռ հեռուից ձանապարհը ծռել և
աչքերը փակել նրան չը տեսնելու համար: Սկա-
նստիկանական պաշտօնեան ընդնութիւն կատա-
րելու. ամենքը համոզված էին, որ անմի-
ջապէս կը բանտարկվի քաղաքը, գիւղեա-
պանները պատրաստվում էին ճիշտ ցուցմունք
տալու, սպանուողները աղակաւորները մատնա-
ցոյց արեցին իսկական ոճրագործին, բայց ինչ
եղաւ: Խամայիլ-բէկ Սուլթանով, որ բաւական
հեռու էր յիշեալ գիւղից՝ անմիջապէս կարծես
գետնից բուսաւ ոստիկանութեան պաշտօնեայի
առաջ և, իբրև հասարակութեան տանուէր՝
կատակը գցեց ոչ թէ իսկական ոճրագործի վրա,
որից տեղեկութիւն ունէր, այլ սպանված կնոջ
կողմէ և քրոջ ամուսնու վրա, անշուշտ ինքն էլ
չը հաւատարմ իր տուած ցուցմունքին: Ասա-
կածվեցին անուղ մարդիկ և բանտում երկար
տանջվելուց յետոյ՝ հազար արձակվեցին դրամա-
կան երաշխաւորութեամբ: Գործը խնդիր: Իս-
կական յանցարարը՝ այդպիսի պայմաններին չնոր-

յենով, կ'ըսեմք, թէ Վիլհելմ II Նրուսաղէմի
մէջ չի պիտի օժեանի, այլ քաղաքէն դուրս՝
17,000 մէտր ընդարձակ և օդառուն տեղւոյ մը
վրայ: Այսպէս լայնածաւալ դաշտավայր մը
գտնելը բաւական ծանր հոգս կը պատճառէ տե-
ղական կառավարութեան:

Կայսրն ու կայսրուհին Նրուսաղէմէն վերա-
դառնալով, նոյնիմբերի 17-ին կամ 18-ին (նո-
ւ.) Աղէքսանդրիա պիտի գտնուին: Այս որո-
շումը տրուած է վերջերս Համբուրգի կայսերա-
կան պալատին մէջ, խորհրդակցութեամբ Գեր-
մանիոյ կայսեր մեծ-բարոյգրաւոր կոմս Օլլեն-
բուրգի և ուրիշ բարձրաստիճանի պաշտօնեաներնե-
րու: Վեհապետական զոյգը՝ մէկ կամ առ ա-
ռաւելն՝ երկու օր պիտի մնայ Աղէքսանդրիոյ
մէջ, և պիտի մեկնին Գալիլէ, ուր երեք-չորս
օր հանդիստ առնելով, պիտի այցելեն Վիլհելմ II
Սաքսոնիայի բուրգերը, Վիլհելմ II-ի միւսնոր, Նիդը-
րլանդի թագաւորին դամբարանները, Նախա-
տիկներու թաղը, քաղաքեալ անտառը և ուրիշ
նշանաւոր վայրերը: յետոյ պիտի երթան Վերմ-
նդիպտոս, աչքէ անցնելու համար հին Լուք-
սորը տաճարները, Բարնաբը և ուրիշ կարեւոր
տեղերը, և, վերադարձին պիտի ուղևորին
Պորտ-Մայլի, ոսկից պիտի վերադառնան ի
Գերմանիա:

Նոյնպիսի ելքովական նախարարութիւնը չորս
հազար եզրիպտական լիւրայի (40,000 բուրգի)
վարկ մը բացած է Գալիլիէի մէջ՝ ինչ-ինչ
վերանորոգութեանց ծախսը համար: Նոյնպէս
նորոգութիւններ կը լինին Աղէքլին պալատին և
խղիական երկու զբօսանաւերուն մէջ: Նոյն
ելքովական նախարարութիւնն ուրիշ նոյնքան
գումար մը յատկացուցած է հիւր վեհապետին
ընդունելութեան ծախսը համար:

Կը հաւատեն, թէ Վիլհելմ II Բէրլին ալ
պիտի երթայ, ոսկից պիտի անցնի Գաւթական:
Այս երկու կուսակալութեանց մէջ ալ մեծ պատ-
րաստութիւններ կը լինին և տեղական պաշտո-
նէութիւններն ամեն ճիւղ կը թափեն Օսմանեան

հիւ հնչուութեամբ բանտից դուրս եկաւ՝ զը-
րուանը և սարափ տարածելով ամենքի վրա:
Նոյն գիւղացի Մարտիրոս Սարգսեան, որ հաս-
տատապէս գիտէր սպանողի ու լինելը, աշխա-
տում էր անպատճառ լոյս գցելով գործի վրա՝
մեղադրին դատաւարտել տալ, ոճրագործին
թոյլ չը տալ արգարադատութեան պատժից ա-
զատվել: Իսկ ոճրագործը, պաշտպան ունենալով
Խամայիլ-բէկին, միանգամայն սանձարձակ դար-
ձաւ. նա օր ցերեկով մտաւ Սարգսեանի այ-
գին և կտրուեց պտղատու ծառերը: Երբ այդ
մասին այդու տէրը յայտնեց Խամայիլ-բէկին,
վերջինս փոխանակ բաւարարութիւն տալով՝ ա-
նաց. «Բոլ Գիւ շատ վնասներ կը կրես: Այդ
բանը չը սարսեցրեց Սարգսեանին և նա շարու-
նակում էր հետամտել գործին: Եւ անս ոճրա-
գործը՝ խախտված Խամայիլ-բէկի պաշտպա-
նութիւնից՝ օր ցերեկով, փողոցում, սուրը ձեռ-
քին, յարձակվեց Սարգսեանի վրա, կամենալով
վերջ տալ նրա կեանքին: Այս դէպքն էլ Խամա-
յիլ-բէկի ձեռք առած միջոցների շնորհիւ՝ անհե-
տանք մնաց: Սրանից բոլորովին խախտված
նոյն ոճրագործը մի օր վերջ տուեց նոյն գիւ-
ղացի Յարութիւն Աւագեանի կեանքին, լոկ այն
պատճառով, որ վերջինս նոյնպէս հակառակ էր
ոճրագործին և յանդիման էր նախորդ գործի
համար վկայութիւն տալ: Թէպէտ գործողութիւ-
նը ամենապարզ գոյն ունէր, բայց Խամայիլ-բէկ
Սուլթանով գործը յեղաշրջելով՝ փոխադարձ կը-
ռու յայտարարեց այդ դէպքը: Այդ վարժուողով
նա նա ապացուցեց, որ միմիայն ոճրագործին
պաշտպանել և նրան պատու ազատել էր ճշգ-
րուած: Ուրիշ փաստեր էլ կան: Այդպէս ուրեմն,
սեփականացնել հասարակութեան փողեր, հո-
վանաւորել զարգելի ոճրագործութիւն, պաշտո-
նական գեղծումներ կատարել... Այդ բոլորը
կատարել է մի մարդ, որ բոլորովինով երկար
ժամանակ թիչ էր մնացել ոսկե չղթայի պատ-
ւին արժանանալու: Այժմ արդէն վարագործը
պատուված է:

Յով. Խօջաէնաթեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Շուշի, սեպտեմբերի 1-ին

Խնդրում եմ տղայից իմ հետեւեալ պատաս-
խանք. Մալախի թիւ 120-ի մէջ բժիշկ Տեր-Իսա-
թեան գրում է, որ ես Խանքենցում չեմ մնում:
Խանքենցում 150 բուրգով անկարող լինելով
ապրել, ես բարւոք եմ դատել իմ ազգականնե-
րիս մօտ Շուշում մնալ: Մալախի թիւ 102-ի մէջ
գրած իմ պատասխանումս յիշված է այդ ի
գուր է բժիշկը անտես անում իմ պարագա-
ւանքը և ժամկէտ աւելի է, անաւտիկ: Դպրոցը
երկրպետան է: Իւրաքանչիւր երկու բաժանմուն-
քի ղեկավարած է մի անհետակում: Երեւան ամեն մի
երկու բաժանմունքում կալ մի-մի կրօնի դաս, ու-

ղաւառներու բարեկարգութեան վրայ (?) բարձր
գաղափար մը ընծայելու: Կայսերական հիւրին:
Աշխատելու առնուած տեղեկութեանց նախելով,
անցեալ յուլիսի 9-ին (հ. տ.), ի ներկայութեան
Ագեայի կառավարչին և սուլթանին կողմանէ
մասնաւորապէս ղրկուած թիկնապա՝ Նաֆիզ-
բէկի և օտար պետութեանց ներկայացուցիչնե-
րու, մեծ հանդիսով առաջին քարը դրուել է
Հայֆայի ծովախորշին մէջ շինուելիք նաւամա-
տոցին, որ գերման գաղութին սեպական հո-
ղին կից պիտի լինի, և անմիջապէս շինութեան
ձեռնարկուել է: Գործը յանձնված է ձեռնա-
տելութեան գերման երկրաչափ պ. Լանտի, որ
յատկապէս այդ շինութեան համար ղրկուած է
սուլթանին կողմանէ: Հիմնարկէքի հանդէսն
աւարտել է, ի յաջողութիւն, ոչխար մ'ալ
մորթուել յետոյ, ներկայ գտնուող բոլոր պաշ-
տօնաւարները, իրենց հետեւող ունենալով ներ-
կալ հանդիսականաց մեծադուրս մասը, Գերմա-
նիոյ հիւպատոսարանը գնացել են, ուր լէօն չ
մը պատի. եղեր է իրենց, սակայն կը լսեմք,
թէ Սիւրիոյ խալիֆներուն մէջ դժգոհութեան
ծայրեր սկսել են բարձրանալ առ այն, թէ
Սուլթան Համիդ Գերմանիոյ կայսեր պիտի նու-
թի եղեր Հայֆայի ծովախորշը: Թէ որքան ստու-
գութիւն ունին այս լուրերն՝ անշուշտ մօտաւոր
ապագայ մը պիտի հաստատէ:

Վերջին օրերս Բուլղարիոյ մայրաքաղաքին,
Սօֆիայի մէջ՝ պ. Փոպպէֆի նախագահութեան
ներքեւ գումարված մակեդոնական համաժողովն
ընդունել է այն յիշատակագիրը, զոր Բերլինի
դաշնագրութիւնը կնքող պետութեանց պիտի
մատուցանէ, որով Մակեդոնիայի համար ինք-
նավարութիւն կը պահանջէ սուլթանին գերիշ-
խանութեան ներքեւ:

Սոյն յիշատակագիրը խմբագրուած է՝ 1896-ին,
Սօֆիայի մակեդոնական համաժողովին մէջ հաս-
տատված «բարենորոգմանց ծրարին» հիման
վրայ, հետեւեալ պայմաններով.

րեմն շարաթական 12 դաս: Ռուս աշակերտնե-
րը շարաթը երկու անգամ պարագում են ե-
կեղեցական երգեցողութեամբ, որի ժամանակ
նայեցը մնում են պարագայ, որոնց պէտք է պա-
րագանել: Նայոյ լեզու դաս տալով, այս էլ եր-
կու դաս, որանց վրա էլ աւելացրէք եկեղեցա-
կան երգեցողութիւնը, փոխառացութիւնը, որ
պիտի պարագել կէսօրերից յետոյ, այս էլ 12
դաս, որ է 26 դաս, կամ 26 ժամ: Իսկ այդ
բոլորի վարձն է 75 բուրգի, որ մի և նոյնն է
թէ գնալ դպրոց և փոխով մուտնդ ստանալ:
Բժիշկն ասում է, որ իմ երկու շարաթվայ բա-
ցակայութեան ժամանակ երեք մեռնող եղաւ:
Նախ երեք մեռնող չի եղել, այլ երկու, և դը-
րանցից արդիւնք է եղել 2 բ. 18 կոպ., իսկ
յուլիսի 14-ից մինչև յուլիսի 14-ը ոչ մի օրէնք
չի եղել, և քահանան մի ամսում պէտք է կե-
րակվէր 2 բ. 18 կոպէկով: Փահանան պողպա-
տի կամը պէտք է ունենայ՝ այնպիսի մի տեղ
ապրելու համար, որ արդիւնքը հաւասար է
ամական 1—5 բուրգի: Բժիշկը վերապէս ա-
սում է. «Ժողովուրդը զուրկով ապրելով վար-
մունքներից, ուղարկել է Վեհափառ Կաթողիկո-
սին խնդրել խնդրելով կարգադրելու, որ կամ
քահանան մնայ Խանքենցում և հողայ ժողովրդի
պէտքերը, կամ նոր քահանայ ընտրելու իրա-
ւունք տրվի ժողովրդին: Սպասում ենք...»: Այդ
խնդիրը լուծված է, և իրաւունք է տրված
խանքենցիներին նոր քահանայ ընտրելու:

Պ. քահ. Տէր-Յովհաննեսեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Հայոց Կաթողիկոսի ձանապարհորդութեան
մասին Ձանգեղուր գաւառի Քարահունջ գիւղից
մեջ գրում են. «Սեպտեմբերի 1-ին Վեհափառ
Կաթողիկոսը Շուշուց վերադառնալու խոստ
յոդեանութեան պատճառով գիւղերից Տեղ ա-
նուանված պոստի կայարանում և այստե հետեւեալ
օրը՝ ժամը 10-ին ձիաւոր ուղեկիցներով հասաւ
Գորիս: Դեռ Տեղ կայարանում Վեհափառը ցան-
կութիւն էր յայտնել Գորիսի Տաթև անցնի-
լիս՝ այցելել քաղաքական յայտնի դրամատէր
Առ. Մատուրեանի ծննդավայր Քարահունջ գիւ-
ղը: Նրա փոքր եղբայր Բախչի Մատուրեանը,
այդ լուրը առնելուն պէս, շտապեց Գորիս, ուր
ներկայանալով Կաթողիկոսին խնդրեց բարեհա-
ճել Քարահունջում լինել իր տանը: Այսօր ժա-
մը 10-ին ձեռունի Հայրապետը հասաւ Քարա-
հունջ: Գիւղի մօտ կանգնեցրած էր կանաչ ձիւ-
ղերից, ծաղիկներից և տեսակ-տեսակ պտուղ-
ներից զարդարված մի կամար: Երբ Վեհափա-
ռը ձիով հասաւ գիւղ, առաջ եկան գիւղի
թուրք կալուածատէր Բէհբուդ-բէկ Մանուկ-
բէկով և Մ. Սեփանց, որպէս պատգամաւոր-
ներ. վերջինը աղ ու հաց մատուցեց: Պատ-
գամաւորները խնդրեցին Վեհափառի օրհնու-
թիւնը՝ գիւղի, ժողովրդի և հանդիս անդամա-
նի վրա: Մատուրեանի տանը մի փոքր հանդըս-

1) Սէլանիկի, Մանաստրի և Իւսթիւպի կու-
սակալութիւնները միացնելով՝ ամբողջ Մակե-
դոնիան միայն մէկ գաւառ կազմել, որուն գա-
ւառագլուխը լինի Սէլանիկը:

2) Ընդհանուր կուսակալ մը անուանել, որ
գաւառին մէջ տիրող կոծիքին և ազգայնութեան
պատկանի:

3) Գաւառական ընդհանուր ժողով մը ընտրել՝
որ իրաւունք ունենայ գաւառին տարեկան
բուդժէն բուժարկելու:

4) Գաւառին համար տեղական միջոցաւ սահ-
մանել և այլն:

Համաժողովը կնքողական կոմիտէին յանձնել
է յիշեալ յիշատակագիրը՝ ի դէպ ժամու մեծ պե-
տութեանց ներկայացնելու: Ռուսական կառա-
վարութեան կամքն առնելով հանդերձ:

Գալով Կրետի խնդրին, սուլթանը՝ կերել
չնդունել կղզիին մէջ թրքական զօրը չի հան-
լու մասին ծովակալներու կողմանէ տրուած ու-
րոշումը:

Բէրլինի Օսմանեան դեսպանը մասնաւորապէս
խնդրեց է գերմանական կառավարութեանը՝ որ
պաշտպանէ Օսմանեան պետութեան սոյն իրա-
ւունքը հանդէպ չորս պետութեան (Ռուսաստանի
Ֆրանսայի, Անգլիոյ և Իտալիոյ), որպէս զի չի
հակառակին Օսմանեան զօրաց Կրետէ ելնելուն:
Գերմանական կառավարութիւնը խորհուրդ
տուել է սուլթանին, որ չփոխութեանց տեղի
չի տալու համար ընդունի չորս պետութեանց
որոշումը. իսկ եթէ սուլթանը յարմար կը դատէ,
բողոքէ անոնց դէմ: Պաշտօնական չըմանալներու
մէջ կը խոսուի, թէ սուլթանը տրամադրել է
ընդունելու ներկայ կայսրութիւնն ու բնաւ չի
պիտի բողոքէ, սակայն իրեն պիտի վերապահէ՝
առաջին անգամ՝ երբ առկի՞ր ներկայացնող, զօ

Типографія Грузинск. Издат. Т—ва, Лорисъ-Мелик. ул. № 13